



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

8 հունվարի 2018թ. թիվ 3

**ՊԱՐՈՒՅՐ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՐԲ  
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի 27.12.2017թ. նիստի թիվ 3 արձանագրությունը և հաշվի առնելով Պ.Շահվերդյանի բացատրությունը՝

Կ ա Ր Գ Ա Դ Ի Ր ու մ եմ.

1. Աշխատանքում ունեցած լուրջ թերությունների և խախտումների համար «ՀՀ Լոռու մարզի Այգեհատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Պարույր Շահվերդյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. «ՀՀ Լոռու մարզի Այգեհատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Պ.Շահվերդյանին՝

10-օրյա ժամկետում վերացնել հայտնաբերված խախտումներն ու թերությունները և արդյունքների մասին տեղեկացնել:

3. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2018թ. հունվարի 8  
ք.Վանաձոր